«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2018թ.

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՄՓՈՓ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համախմբված ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն 1
Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն 2
Համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 3
Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 4
Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 5

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ղեկավարությանը և տնօրենների խորհրդին

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ներկայացվող ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ և վերջինիս դուստր կազմակերպությունների (այսուհետ՝ «Խումբ»)՝ աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ ներկայացված Ծանոթագրության համաձայն:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմվել են 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ Խմբի աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ներառում են՝

- 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված սեփական կապիտալում մասին ամփոփ հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը,
- ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվության համապատասխան ծանոթագրություն:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված չեն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնք ենթակա են բացահայտման՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Հետևաբար, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Խմբի աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված կարծիք աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր՝ 2019թ. մարտի 25-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության մեջ:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am

Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրության համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է արտահայտել կարծիք՝ արդյոք ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմնվելով մեր կողմից իրականացված ընթացակարգերի վրա՝ աուդիտի միջազգային ստանդարտ (վերանայված) 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»-ի համաձայն:

Մայքլ Աներն
Գործադիր գործընկեր

Սերգեյ Յակուբի
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC

25 մարտի 2019թ.
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Համախմբված ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

մլն. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	311,103	315,429
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	9,201	9,215
Ոչ ընթացիկ դեբիտորական պարտքեր	-	5,541
Տրամադրված փոխառություններ	39	65
Հետաձգված հարկային ակտիվներ	6,806	10,560
Շահութահարկի գծով ոչ ընթացիկ կանխավճարներ	676	686
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	282	330
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**328,107**	**341,826**
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	16,021	16,618
Տրամադրված փոխառություններ	166	300
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	39,531	39,919
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար	41	250
Ժամկետային ավանդներ	737	32,901
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,530	9,663
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**62,026**	**99,651**
Ընդամենը ակտիվներ	**390,133**	**441,477**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Կանոնադրական կապիտալ	370,932	344,550
Էմիսիոն եկամուտ	1,453	1,453
Լրացուցիչ կապիտալ	216	263
Կուտակված վնաս	(88,461)	(103,381)
Ընդամենը սեփական կապիտալ	**284,140**	**242,885**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	3,548	14,064
Պետական շնորհներ	246	284
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**3,794**	**14,348**
Ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	61,070	151,572
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	41,129	32,672
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**102,199**	**184,244**
Ընդամենը պարտավորություններ	**105,993**	**198,592**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**390,133**	**441,477**

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2019թ. մարտի 25-ին:

Հրանտ Թադևոսյան,
Վարչության նախագահ
– գլխավոր տնօրեն

Վարդան Նաչարյան,
Գլխավոր հաշվապահ

5-րդ էջում ներկայացված ծանոթագրությունը հանդիսանում է սույն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն

մլն. ՀՀ դրամ	**2018թ.**	**2017թ.**
Հասույթ	232,809	216,846
Վաճառքի ինքնարժեք	(210,267)	(198,467)
Համախառն շահույթ	**22,542**	**18,379**
Այլ գործառնական եկամուտ	28,790	796
Ընդհանուր և վարչական ծախսեր	(12,885)	(12,960)
Այլ գործառնական ծախսեր	(12,201)	(1,701)
Գործառնական շահույթ	**26,246**	**4,514**
Ֆինանսական եկամուտ	2,360	2,369
Ֆինանսական ծախսեր	(9,917)	(14,113)
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը	**18,689**	**(7,230)**
Շահութահարկի գծով ծախսեր	(3,769)	(2,134)
Տարվա շահույթ/(վնաս)	**14,920**	**(9,364)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**14,920**	**(9,364)**

5-րդ էջում ներկայացված ծանոթագրությունը հանդիսանում է սույն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

	Խմբի սեփականատերերին վերագրելի				
մլն. ՀՀ դրամ	**Կանոնադրական կապիտալ**	**Էմիսիոն եկամուտ**	**Լրացուցիչ կապիտալ**	**Կուտակված վնաս**	**Ընդամենը**
Մնացորդն առ 1 հունվարի 2017թ.	**327,596**	**-**	**265**	**(94,017)**	**233,844**
Բաժնետոմսերի թողարկում	16,954	1,453	(2)	-	18,405
Ընդամենը 2017թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(9,364)	(9,364)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2017թ.	**344,550**	**1,453**	**263**	**(103,381)**	**242,885**
Բաժնետոմսերի թողարկում	26,382	-	(47)	-	26,335
Ընդամենը 2018թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	14,920	14,920
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2018թ.	**370,932**	**1,453**	**216**	**(88,461)**	**284,140**

5-րդ էջում ներկայացված ծանոթագրությունը հանդիսանում է սույն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

մլն. ՀՀ դրամ	**2018թ.**	**2017թ.**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը	18,689	(7,230)
Ճշգրտումներ.		
Մաշվածություն	14,208	13,272
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում	6,230	170
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման վերականգնում	(81)	(28)
Հիմնական միջոցների արժեզրկում	4,234	-
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտ	(82)	(27)
Այլ պաշարների վաճառքից զուտ օգուտ	(24)	(11)
Շնորհված հիմնական միջոցներից եկամուտ	(38)	(37)
Փոխարժեքային տարբերություններից զուտ (եկամուտ)/վնաս	(842)	1,549
Տոկոսային եկամուտ	(1,593)	(2,369)
Տոկոսային ծախս	9,917	12,564
Եկամուտ առևտրային կրեդիտորական պարտքերի ներումից	(27,874)	(3)
Պահուստների զուտ փոփոխություն	204	47
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	**22,948**	**17,897**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի նվազում	294	14,509
Պաշարների աճ/(նվազում)	933	(1,344)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ	96,032	133,169
Շրջանառու կապիտալի փոփոխություններ	**97,259**	**146,334**
Ստացված տոկոսային եկամուտ	1,318	1,887
Վճարված տոկոսներ	(8,723)	(10,216)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	**112,802**	**155,902**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(15,350)	(10,165)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	134	40
Ժամկետը լրացած ավանդների մարում	35,351	38,846
Նոր ավանդների տեղաբաշխում	(3,359)	(51,542)
Տրամադրված փոխառություններ	(70)	-
Մուտքեր տրամադրված փոխառությունների մարումից	230	132
Ներդրումային (գործունեությունից)/գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	**16,936**	**(22,689)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր նոր բաժնետոմսերի թողարկումից	26,337	18,407
Մուտքեր վարկերից և փոխառություններից	107,629	147,905
Վարկերի և փոխառությունների մարում	(267,867)	(310,824)
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	**(133,901)**	**(144,512)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	30	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**9,663**	**20,962**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**5,530**	**9,663**

5-րդ էջում ներկայացված ծանոթագրությունը հանդիսանում է սույն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1 Պատրաստման հիմունքներ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պահանջներին համաձայն, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն պարտավոր է հրապարակել իր ֆինանսական հաշվետվությունները:

Խմբի սույն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք պատրաստվել են 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, ներառում են՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտված տարվա ամփոփ համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտված տարվա համար ամփոփ համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, ամփոփ համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը՝ նշված ամսաթվին ավարտված տարվա համար, ինչպես նաև ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված չեն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան բացահայտման ենթակա բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացահայտումները: ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել Խմբի ղեկավարության կողմից՝ հարցման հիման վրա: